Երևանի պետական համալսարանում գործող
ՀՀ ԲՈԿ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդին
(հասցե՝ 0025, Հայաստանի Հանրապետություն,
ք. Երևան, Ալեք Մանուկյան փողոց, թիվ 1)

ԿԱՐԾԻՔ

Պաշտոնական ընդդիմախոս իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արմեն Հայկյանցի՝ ԺԲ.00.03 «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)» մասնագիտությամբ Աննա Արայի Մկրտչյանի կողմից իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման՝ «Իրավունքի ինքնապաշտպանությունը քաղաքացիական իրավունքում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ

Աննա Մկրտչյանի հեղինակած և հրապարակային պաշտպանության ներկայացված ատենախոսական հետազոտությունը նվիրված է հայրենական քաղաքացիական իրավունքի գիտության մեջ ամփոփ և համալիր մակարդակով՝ դեռևս չուսումնասիրված հարցերի շրջանակի:

Իրավունքի արդի ընկալումների տեսանկյունից իրավունքների ինքնապաշտպանությունը, որպես քաղաքացիա-իրավական երևույթ, ամրագրված է իրավական տարբեր համակարգերում, և այդ ուղղությամբ օրենսդրական մոտեցումներն ու կարգավորումները շատ տարբեր են: Մի կողմից հնարավորություն է ընձեռվում օրենքով չարգելված բոլոր եղանակներով իրականացնել քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանություն, ընդհուպ մինչև՝ նախատեսելով պայմանագրային հարաբերությունների ոլորտում, մյուս կողմից իրավունքների ինքնապաշտպանության իրականացումը հնարավոր և օրինաչափ է համարվում միայն օրենքով նախատեսված դեպքերում:

Քաղաքացիաիրավական ինքնապաշտպանության ինստիտուտի կիրառման վերաբերյալ պատկերացումները բավականին ընդգրկուն են, և ընդունված է համարել, որ ինքնապաշտպանությունը կարելի է կիրառել քաղաքացիական բոլոր իրավահարաբերությունների առնչությամբ: Այն սահմանափակված չէ միայն որոշակի իրավունքների պաշտպանության դեպքերով: Քաղաքացիական իրավունքի տեսական աղբյուրներում առավել տարածված է այն տեսակետը, որ իրավունքների ինքնապաշտպանությունը հանդիսանում է քաղաքացիական իրավունքների պաշտպանության ընդհանուր, այլ ոչ թե հատուկ ձև:

Խորապես գիտակցելով հարցի բարդությունը և խորությունը՝ ատենախոսը խիզախել է հայրենական իրավագիտության մեջ *համալիր հետազոտություն իրականացնել և համակարգային* կերպով բացահայտել ինքնապաշտպանության բնույթն ու էությունը, տեղը և դերը քաղաքացիական իրավունքում՝ վեր հանելով իրավունքի ինքնապաշտպանության ինստիտուտի առանձնահատկությունները ու եղանակները: Ատենախոսության շրջանակներում քննարկման առարկա է դարձվել իրավունքի ինքնապաշտպանության նյութահիրավական ասպեկտը, այն դիտարկելով ոչ թե որպես դատավարական իրավունքի ընթացքում իրականացվող գործողություն, այլ որպես նյութական իրավունքի լիարժեք ինստիտուտ:

Հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ փորձ է արվել հիմնավորելու քաղաքացիական օրենսդրության այլ ինստիտուտների պաշտպանության հատուկ նորմերի հետ իրավունքի ինքնապաշտպանության ինստիտուտի հարաբերակցության և դրանց հստակ տարանջատման չափորոշիչները: Ատենախոսը ջանքեր է գործադրել հիմնավորելու իրավունքի ինքնապաշտպանության, որպես օրենսդրության ընդհանուր մասում ընդգրկված ինստիտուտի, կատարելագործման անհրաժեշտությունը, ինչպես նաև որոշակիացրել է օրենսդրության հատուկ մասի առանձին ինստիտուտներում իրավունքի ինքնապաշտպանության տարբեր պարունակող նորմերի հիմնախնդիրը:

Ատենախոսն իր հետազոտական խնդիրներին անդրադարձել է գիտաճանաչողական անհրաժեշտ և բավարար կազմով մեթոդների գործադրմամբ՝ զուգորդելով տեսական և պրակտիկ մեծածավալ նյութերի ուսումնասիրման հետ, որպիսի հանգամանքը բարձրացնում է արված եզրահանգումների, կատարվածառաջարկությունների համոզչականությունն և հիմնավորվածությունը:

Ըստ էության, ատենախոսին հաջողվել է հասնել իր կողմից հայտարարված ատեախոսական ուսումնասիրության նպատակին, այն է՝

-բացահայտել ինքնապաշտպանության բնույթն ու էությունը, տեղը և դերը քաղաքացիական իրավունքում, ինքնապաշտպանության վերաբերյալ գիտական մոտեցումների համալիր ուսումնասիրության և վերլուծության հիման վրա օրենսդրական կարգավորումների թերությունների վերհանումն ու առաջարկությունների ներկայացումը:

Այս դիտարկման առհավատչյան են հանդիսանում ատենախոսի կողմից հրապարակված՝ թվով 10 գիտական հոդվածները, որոնք արտահայտելով ատենախոսության հիմնական բովանդակությունը՝ գիտական հանրույթին են ներկայացրել ատենախոսական հետազոտության արդյունքները, ընդունվել են գիտական հանրույթի կողմից և դրանց առնչությամբ առայսօր չեն արձանագրվել գիտական հակադարձումներ:

Վերոշարադրյալով հանդերձ՝ քննադատ դիտողականությամբ ցանկանում ենք որոշակի նկատառումներ ներկայացնել ատենախոսական աշխատանքի վերաբերյալ, որոնք կարող են օգտակար լինել ատենախոսին՝ հետագա գիտական ուսումնասիրությունների շարունակականության պարագայում.

1. Հեղինակն իրավունքի ինքնապաշտպանության քննարկումն իրականացրել է, այն ներկայացնելով որպես իրավունքի պաշտպանության ինքնուրույն ձև: Իրավունքի ինքնապաշտպանությունը դասել է <<ոչ յուրիսդիկցիոն>> պաշտպանության ձևերի շարքին: Ներկայացված եզրույթն ինքնին նորույթ է

հայրենական քաղաքացիական իրավունքում, ինչը ենթադրում է, որ դրա ներմուծումը պետք է իրականացնել լայնածավալ հիմնավորումների առկայությամբ: <<Ոչ յուրիսդիկցիոն>> եզրույթն աշխատանքում բացահայտված չէ: Պարզ չէ, թե պաշտպանության ձևն ինչպիսի հատկանիշներով պիտի օժտված լինի, որպեսզի դասվի <<ոչ յուրիսդիկցիոն>> պաշտպանության ձևերի շարքին: Ավելին, իրավունքի ինքնապաշտպանությունը որակվել է որպես <<ոչ յուրիսդիկցիոն>> պաշտպանության ձև՝ հաշվի առնելով միայն իրավական հետևանքի բացակայությունն ու փաստացի կատարվող գործողությունների միջև պատճառահետևանքային կապը: Խնդրահարույց են հեղինակի առաջ քաշած եզրահանգումները՝ իրավունքի ինքնապաշտպանության ընթացքում իրականացվող գործողությունների իրավական հետևանք չառաջացնելու վերաբերյալ: Կարծում ենք, իրավական հետևանքի առաջացման հանգամանքն առկա է այն պահից սկսած, երբ անձը ստանում է իրավունքի ինքնապաշտպանության դիմելու իրավական հնարավորությունը: Իրավախախտման կանխումը կամ վերացումը ևս անհրաժեշտ է դիտել որպես իրավական հետևանք, որն առաջանում է իրավունքի ինքնապաշտպանության արդյունքում:

2. Հեղինակը երկրորդ գլխի 2.4. պարագրաֆում քննարկման առարկա է դարձրել անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտները: Դրանց զուգահեռ ուսումնասիրությունը հուշում է, որ անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտները դիտարկվել են նույն չափորոշիչներով: Սակայն, պաշտպանության ներկայացվող դրույթներում պնդումներ կատարվել են միայն անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի վերաբերյալ: Պարզ չէ, արդյոք ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտն ըստ հետազոտության՝ ևս

հանդիսանում է իրավունքի ինքնապաշտպանության եղանակ, թե՝ ոչ: Եթե իրավունքի ինքնապաշտպանության եղանակ է, ապա անհրաժեշտ էր պատասխանել նաև իրավակարգավորումների հարցին: Արդյոք կարգավորվում է աշխատանքում առաջարկված՝ ընդհանուր դրույթների, թե դելիկտային կարգավորումների շրջանակներում: Եթե իրավունքի ինքնապաշտպանության եղանակ չէ, ապա ինչպիսի հարաբերակցության մեջ է գտնվում ատենախոսության հետազոտության առարկայի հետ:

3. Հեղինակը պաշտպանության ներկայացվող դրույթներում առաջարկել է անհրաժեշտ պաշտպանությունը հանել արտապայմանագրային պարտավորությունների շրջանակներից և այն ներառել ընդհանուր դրույթներում՝ լրացնելով նոր՝ 16.1. հոդվածով: Ստացվում է, որ այսպիսի փոփոխությունից հետո անհրաժեշտ պաշտպանությունը տարածվելու է քաղաքացիական բոլոր իրավահարաբերությունների վրա և կիրառելի է լինելու իրավախախտումների առավել լայն շրջանակի նկատմամբ: Այս պարագայում անհրաժեշտ պաշտպանության թույլատրելի շրջանակներն արդյոք չեն խոչընդոտի քաղաքացիաիրավական պարտավորությունների կատարմանը, այլևս հղում անելով իրավունքի ենթադրյալ պաշտպանությանը:

4. Հեղինակն աշխատանքի ողջ տրամաբանությունը կառուցում է՝ հիմնավորելով իրավունքի ինքնապաշտպանության ընդհանուր կարգավորումների հայեցակարգը: Այդ նպատակով՝ իրավունքի ինքնապաշտպանության ինստիտուտի կատարելագործմանն ուղղված մի շարք առաջարկություններ են ներկայացվել ընդհանուր դրույթներում: Սակայն, աշխատանքի 3-րդ գլխում քննարկման առարկա է դարձվում սեփականության իրավունքի, հարևանային իրավունքի պաշտպանության ձևերը: Եթե աշխատանքն ամբողջությամբ հիմնավորում է ընդհանուր իրավակարգավորումների տրամաբանությունը,

ապա անհասկանալի է նման ուշադրությունն առանձին ինստիտուտների իրավակարգավորումներին:

Վերոնշյալ նկատառումները խորհրդատվական բնույթ ունեն, չեն հասնում գիտական հետազոտության հիմքերին և չեն խարխլում այդ հիմքերը, սակայն որոնք հաշվի առնելն էլ ավելի կբարձրացներ աշխատանքի գիտահետազոտական արժեքը:

Մեր գնահատմամբ, Աննա Մկրտչյանի հեղինակած <<Իրավունքի ինքնապաշտպանությունը քաղաքացիական իրավունքում>> վերտառությամբ ատենախոսական աշխատանքն ամփոփ, ավարտուն, համակարգված գիտական հետազոտություն է, համապատասխանում է ՀՀ Կառավարության՝ 08.08.1997թ. No 327 որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի պահանջներին, և ատենախոսության հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհման:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝ Ա.ՀԱՅԿՅԱՆՑ

Պրոֆեսոր,
իր.գիտ.դոկտոր
14.04.2023թ.

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր Արմեն Հայկյանցի ստորագրության իսկությունը հաստատում եմ:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
դեկանի տեղակալ,
պրոֆեսոր, իրավ. գիտ. դոկտոր՝ Հ.Մ.ԽԱՉԻԿՅԱՆ